ԱՐԴ/0434/01/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

30 դեկտեմբերի 2024 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՐԴ/0434/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 23-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2024 թվականի մայիսի 24-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Նժդեհ Հովհաննեսի Ենոքյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 223.1-րդ հոդվածի 1-ին մասով և 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 5-րդ կետերով թիվ 48102424 (ԱՐԴ/0434/01/24) քրեական վարույթը:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի մայիսի 30-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0434/01/24 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2024 թվականի հոկտեմբերի 4-ին թիվ ԱՐԴ/0434/01/24 քրեական վարույթը վերաբաշխվել է դատավոր Հ.Մեխակյանին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 9-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0434/01/24 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 12-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 23-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0434/01/24 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի դեկտեմբերի 26-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Նժդեհ Հովհաննեսի Ենոքյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածի 1-ին մասով և 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 5-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ նա *«(…) [Ս]տացել և 2022 թվականի մայիս ամսվա դրությամբ պահպանել է քրեական աստիճանակարգության բարձրագույն՝ «քրեական հեղինակության» կարգավիճակ, այն է՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն՝ համարվում է հեղինակություն, ստեղծել և ղեկավարել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորում, որի հետապնդած*

նպատակների իրականացման համար տվել է հրահանգներ, ինչպես նաև կատարել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանն ուղղված այլ գործողություններ:

Այսպես.

Նժդեհ Հովհաննեսի Ենոքյանը, «գողական աշխարհում» հայտնի լինելով որպես 2003 թվականից անհետ կորած համարվող «օրենքով գող Գոռիկի» ազգականը, ստացել ու 2022 թվականի մայիս ամսվա դրությամբ պահպանել է քրեական աստիճանակարգության բարձրագույն՝ «քրեական հեղինակության» կարգավիճակ՝ հայտնի դառնալով «Նժդիկ» մականվամբ: Նժդեհ Ենոքյանի հիշյալ կարգավիճակը ճանաչված է եղել ինչպես «քրեական աշխարհի» ներկայացուցիչների, այդ թվում՝ «օրենքով գողի» կարգավիճակ ունեցող անձանց, այնպես էլ Նժդեհ Ենոքյանի կողմից ստեղծված և ղեկավարվող քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակիցների կողմից: Վերջիններից մեկը՝ Նժդեհ Ենոքյանի կողմից ստեղծված և ղեկավարվող քրեական ենթամշակույթ կրող հանցավոր խմբավորման մասնակից Արթուր Եգոռի Մարտիրոսյանը, որը նշված խմբավորման մեջ հայտնի է «Կիլդիմ» մականվամբ, Նժդեհ Ենոքյանի հետ խոսակցությունների ընթացքում նրան դիմել է վերջինիս կարգավիճակն ընդգծող «քերոբ» արտահայտությամբ, ինչպես նաև բազմիցս նշել, որ նրա խոսքերից առավել «ճիշտ» իր համար գոյություն չունի՝ պարտավորվելով անվերապահորեն կատարել նրա՝ գողոնը վերադարձնելու, կատարած գողությունների և այլ հանցագործությունների արդյունքում ձեռք բերված «եկամուտից» նրան «բաժին» հանելու բոլոր պահանջները: Վերջինս պարբերաբար նշել է, որ Նժդեհ Ենոքյանն իրենց «գողն է», «քերոբն է», «լիդերն է»՝ այդկերպ ընդգծելով վերջինիս կարգավիճակը: Նժդեհ Ենոքյանին նույն կերպ են դիմել նաև հիշյալ խմբավորման մյուս անդամները:

(...)

Բացի այդ, «Նժդիկ» մականվամբ հայտնի, «հանցավոր հեղինակություն»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Նժդեհ Հովհաննեսի Ենոքյանը, որը 18.04.2003թ. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքների

կատարման համար 2014 թվականի սեպտեմբերի 22-ին դատապարտվել է 9 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման և պատիժ է կրել ՀՀ ԱՆ տարբեր քրեակատարողական հիմնարկներում, պատիժ կրելու ընթացքում, այսինքն՝ հանդիսանալով քրեակատարողական հիմնարկում պահվող անձ, Արմավիրի մարզում ստեղծել և ղեկավարել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորում՝ քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորում, որը գործում է իր սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, որոնք չեն համապատասխանում պետության սահմանած վարքագծի համապարտադիր կանոններին և դրանց իրացման իրավաչափ ձևերին, հովանավորել է խմբավորման անդամների կողմից կատարված հանցագործությունները, իրականացրել է մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելը, անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալը, որի հետապնդած նպատակների իրականացման համար տվել է հրահանգներ, ինչպես նաև տնօրինել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման միջոցով ստացված անօրինական օգուտը և կատարել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանն ուղղված այլ գործողություններ: Մասնավորապես, Նժդեհ Ենոքյանը ստեղծել է «քրեական աշխարհում» ընդունված և ճանաչված վարքագծի կանոնների համաձայն գործող քրեական ենթամշակույթ կրող խմբավորում, որում ընդգրկված են եղել Արմավիրի մարզի Սարդարապատ գյուղի բնակիչներ, «Գոնչ» մականվամբ Էդգար Հովհաննեսի Ենոքյանը, «Ապեր» մականվամբ Էվրիկա Ցոլակի Ենոքյանը, «Կիլդիմ» մականվամբ Արթուր Եգոռի Մարտիրոսյանը, «Ծո» մականվամբ Արմեն Մարտունիկի Լուսիկյանը և քննությամբ չպարզված այլ անձինք, ովքեր ստանալով և կատարելով քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացմանն ուղղված գործողություններ կատարելու մասին Նժդեհ Ենոքյանի հանձնարարությունները, մասնակցել են քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը, ինչպես նաև ներգրավվել դրա հետապնդած նպատակների իրականացմանը:

2022 թվականի մայիսի 24-ին Արթուր Մարտիրոսյանը ինքնությունը դեռևս չպարզված ոմն Ռաֆոյի հետ միասին ապօրինի մուտք են գործել Արմավիրի մարզի

Սարդարապատ համայնքում գտնվող, Հմայակ Ռաֆիկի Աբգարյանին պատկանող գեղեցկության սրահ և այնտեղից գողացել են «Էլոս» մազահեռացման և այլ սարքեր՝ Հմայակ Աբգարյանին պատճառելով շուրջ 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք գույքային վնաս: Գողացված ապրանքները վերադարձնելու խնդրանքով Հմայակ Աբգարյանը դիմել է Նժդեհ Ենոքյանին, որն էլ Արմավիրի մարզի Սարդարապատ գյուղի բնակիչներ Արմեն Մարտունիկի Լուսիկյանի և իր եղբայր Էդգար Հովհաննեսի Ենոքյանի միջոցով Արթուր Մարտիրոսյանից պահանջել է վերադարձնել գողացված ապրանքները: Արթուր Մարտիրոսյանը, մատնանշելով խմբավորման մեջ սահմանված կանոնները, մասնավորապես՝ գողոնը վերադարձնելու դեպքում որպես «փոխհատուցում» դրա վաճառքի հնարավոր գնի չափով գումար ստանալու ակնկալիքը, փորձել է Արմեն Լուսիկյանի հետ բանակցել իրեն փոխհատուցվող գումարի չափի մասին, քանի որ համաձայն չի եղել առաջարկվող 160,000 ՀՀ դրամի հետ, որի վերաբերյալ իր դժգոհությունն է արտահայտել խմբավորման տարբեր անդամների մոտ, սակայն Նժդեհ Ենոքյանը Արթուր Մարտիրոսյանի հետ քողարկված հեռախոսային խոսակցության ընթացքում նախատելով վերջինիս այն բանի համար, որ իրեն «ստիպում է» նույն հարցի կապակցությամբ ասվածը կրկնել, հրահանգել է անմիջապես վերադարձնել գողոնը: Արթուր Մարտիրոսյանը, որևէ կերպ չկարողանալով ընդդիմանալ Նժդեհ Ենոքյանի պահանջին և հայտարարելով, որ նրա խոսքերից առավել «ճիշտ» իր համար գոյություն չունի, վերադարձրել է գողացված ապրանքները՝ ընդունելով առաջարկվող 160.000 ՀՀ դրամը: (…)»[1]:

6. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Համաձայն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ փոխգործելիության հարթակի միջոցով ստացված Նժդեհ Հովհաննեսի Ենոքյանի վերաբերյալ անձնական տվյալների՝ 2021 թվականի հունիսի 03-ից վերջինս գտնվել է ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ ԱՆ) «Երևան-Կենտրոն» ՔԿ հիմնարկում (…):*

(…)

Քրեական գործերի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Նժդեհ Հովհաննեսի Ենոքյանին մեղսագրվել է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 223.1-րդ

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 119-121:

հոդվածի 1-ին մասով (համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասին) և ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 5-րդ կետերով (համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 323-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 5-րդ կետերին) նախատեսված ենթադրյալ հանցանքների կատարում: Ներկայացված մեղադրանքների ուսումնասիրությունից երևում է, որ Նժդեհ Ենոքյանը իրեն մեղսագրվող ենթադրյալ արարքները կատարելու ժամանակ գտնվել է ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿ հիմնարկում (ք.Երևան, Նալբանդյան 104): Այսինքն՝ ենթադրյալ հանցանքները Նժդեհ Ենոքյանի կողմից կատարվել են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում:

(…)

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է թիվ ԱԴ/0434/01/24 քրեական գործն ըստ ընդդատության փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: (…)»[2]*:*

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը, վերոգրյալ իրավական և փաստական տվյալների վերլուծության հիման վրա իր անհամաձայնությունն է հայտնում Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ արտահայտված այն դիրքորոշման հետ, որ «(…) [Ն]երկայացված մեղադրանքների ուսումնասիրությունից երևում է, որ Նժդեհ Ենոքյանը իրեն մեղսագրվող ենթադրյալ արարքները կատարելու ժամանակ գտնվել է ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿ հիմնարկում (ք.Երևան, Նալբանդյան 104): Այսինքն՝ ենթադրյալ հանցանքները Նժդեհ Ենոքյանի կողմից կատարվել են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում(…)»: Մասնավորապես, Նժդեհ Ենոքյանին առաջադրված մեղադրանքի ուսումնասիրությունը հնարավորություն չի տալիս պարզել մեղսագրվող հանցանքների կատարման վայրը: Միևնույն ժամանակ հարկ է արձանագրել, որ Նժդեհ Ենոքյանի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդման*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 82-88:

համաձայն՝ նա «(…) 2014 թվականի սեպտեմբերի 22-ին դատապարտվել է 9 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման և ՀՀ ԱՆ տարբեր քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրելու ընթացքում, այսինքն՝ հանդիսանալով քրեակատարողական հիմնարկում պահվող անձ, Արմավիրի մարզում ստեղծել և ղեկավարել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորում (…)»:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ.Մեհակյանը նախնական դատալսումների փուլում մեղադրյալին մեղսագրված փաստական հանգամանքների շրջանակից դուրս որոշակի հանգամանք է հաստատված համարել և գործն ուղարկել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, մինչդեռ դատարանը նախնական դատալսումների փուլում սահմանափակված է եղել մեղադրյալ Ն.Ենոքյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդում հարուցելու որոշմամբ արտացոլված փաստական հանգամանքներով:

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը գտնում է, որ մեղադրանքի փաստակազմի ուսումնասիրությամբ հնարավոր չէ պարզել մեղադրյալ Ն.Ենոքյանին մեղսագրված հանցանքների կատարման վայրը, ուստի այս դեպքում պետք է գործի մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրի չափանիշը:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ թիվ ԱԴ/0434/01/24 քրեական վարույթը պետք է ուղարկել Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին՝ վարույթի տարածքային ընդդատության հարցը վերջնականապես լուծելու համար: (…)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱԴ/0434/01/24 քրեական վարույթն ընդդատյա է

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 97-105:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]*:*

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: (…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Քրեական ատրճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը (…)»:*

Նույն օրենսգրքի 223.2-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը կամ ղեկավարելը՝ սույն օրենսգրքի 222-րդ կամ 223-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում (…)*

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից,

(…)

5) քրեական ատրճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից (…)»:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, արձանագրելով, որ համաձայն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ փոխգործելիության հարթակի միջոցով ստացված Ն.Ենոքյանի վերաբերյալ անձնական տվյալների՝ վերջինս իրեն վերագրվող ենթադրյալ հանցանքները կատարելու ժամանակ գտնվել է ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին[7]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, գտնելով, որ վարույթի տարածքային ընդդատության հարցը որոշելիս դատարանը սահմանափակված է քրեական հետապնդում հարուցելու որոշմամբ նշված փաստական հանգամանքներով, իսկ սույն դեպքում առաջադրված

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

մեղադրանքի ուսումնասիրությունը հնարավորություն չի տալիս պարզել վերագրվող հանցանքների կատարման վայրը, փաստել է, որ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում գտնվում է մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

Միևնույն ժամանակ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն արձանագրել է, որ Ն.Ենոքյանի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդման համաձայն՝ վերջինս տարբեր քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրելու ընթացքում, Արմավիրի մարզում է ստեղծել և ղեկավարել քրեական ենթամշակույթ կրող խմբավորում[8]:

15. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ Ն.Ենոքյանին ներկայացված մեղադրանքի բովանդակությունից հետևում է, որ վերջինիս ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածի 1-ին մասով և 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 5-րդ կետերով վերագրվող ենթադրյալ հանցանքի կատարման վայրը մինչդատական վարույթի ընթացքում չի պարզվել, հետևաբար, սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: Սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում, որի նստավայրը գտնվում է Արմավիրի մարզում:

16. Ինչ վերաբերում է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից վկայակոչված՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ փոխգործելիության հարթակի միջոցով ստացված Ն.Ենոքյանի վերաբերյալ անձնական տվյալներին, ապա հարկ է արձանագրել, որ վերոնշյալը **բավարար չէ հիմնավոր հետևության հանգելու, որ Ն.Ենոքյանն իրեն վերագրվող ենթադրյալ**

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

հանցանքները կատարել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում:

17. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԴ/0434/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր չէ:

Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԱՐԴ/0434/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Նժդեհ Հովհաննեսի Ենոքյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածի 1-ին մասով և 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 5-րդ կետերով թիվ ԱՐԴ/0434/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ